

4. **Дмитриева Е. И.** Дидактические возможности компьютерных телекоммуникационных сетей для обучения иностранным языкам.// Иностранные языки в школе, N 4,1997.
5. **Полат Е. С.** Дистанционное обучение. Учебное пособие для вузов. М.: Владос, 1998, 192с.
6. **Полат Е. С.** Педагогические технологии дистанционного обучения: учебное пособие // М.: Издательский центр Академия", 2006, 400 с.
7. **Тягова С. В.** Интерактивность как основное свойство дидактического процесса, основанного на применении информационных технологий // Интернет-журнал "Эйдос", 2005.
8. **Хуторской А. В.** Модель образовательной среды в дистанционном эвристическом обучении // Интернет-журнал "Эйдос", 2005, 1 сентября. <http://www.eidos.ru/journal/2005/0901.htm>

ABOUT PRINCIPLE OF DISTANCE EDUCATION

L. R. Mesrobyan

In this article to be described principle of distance education. For this account through the use of high technologies the learners are offered opportunities to choose their instructors as well as teaching courses. Especially telecommunications, multimedia and different interactive procedures suppose high level of effectivity towards the formation and development of the learners' languagecommunicative competence.

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լ. Ռ. Մեսրոբյան

Այս հոդվածում քննության են առնվել հեռավար ուսուցման սկզբունքները, որոնք հնարավորություն են տալիս ընտրելու ոչ միայն ուսուցչին, այլև ուսուցման ծրագրերը: Աշխատանքում դիտարկվում են հեռավար ուսուցման գործընթացում հեռահաղորդակցման, մուլտիմեդիայի և ինտերակտիվ տարբեր ռեսուրսների օգտագործման հետ կապված խնդիրները, որոնք նպաստում են լեզվահաղորդակցական կարողությունների առավելագույն զարգացմանը:

ՄՈՂՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ա. Տ. ՄԱՅԻԼՅԱՆ
ԳՊՀ ռեկտորի օգնական

Բարձրագույն դպրոցում տեղի է ունենում գիտելիքաառարկայական հարացույցից անցում կարողությունների ձևավորման հարացույցի: Անցումը կարողությունների ձևավորման հարացույցի՝ փոխում է համակարգում արժեքը և կրթական գործընթացում՝ սուբյեկտների փոխազդեցությունների բնույթը: Սա ենթադրում է ուսանողակենտրոն հայեցակարգի առկայություն՝ ներառելով կրթական նորարարական տեխնոլոգիաներ, այդ թվում՝ կոնկրետ ուսումնական մեթոդներ:

րի և մոդուլների կիրառում, որոնք պահանջված են նոր ժամանակներում և նոր աշխարհում:

«Մոդուլ» հասկացությունը /լատիներեն moduls-չափ բառից է/ կիրառվել է մաթեմատիկայի, ճարտարապետության և շինարարության բնագավառներում՝ կոորդինացնելու սարքավորումների մասերի չափերը և ամբողջ համալիրը, ընդհանուր առմամբ նշանակում է չափման միավոր կամ գործակից:

Մոդուլային ուսուցման անցումն ունի նախապատմություն և բխում է «մաս» և «ամբողջ» փիլիսոփայական հասկացությունների գոյաբանությունից: Անցումը հոգեբանամանկավարժական տեսության մեջ և ուսուցման տեխնոլոգիայում ընթացել է համակարգային ուղղությամբ: Համակարգային տիպերի հատուկ դասակարգումը փիլիսոփայության մեջ առաջարկել է ամերիկացի փիլիսոփա Ա. Բամը: Նա առանձնացրել է դրա կայացման հիմնական տիպերը՝ ատոմիզմ, խոլիզմ, էներջենտիզմ, կառուցվածքայնություն և օրգանիզմ: Ա. Բամը հաստատում է հետևյալ տեսակետը. «Ատոմիզմում մասը գոյություն ունի առանց ամբողջի, խոլիզմում՝ ամբողջն առանց մասերի, էներջենտիզմում՝ ամբողջից մինչև մասը, և օրգանիզմում ամբողջն ու մասը պայմանավորված են մեկը մյուսով»¹:

Մոդուլային ուսուցման հիմնադիրներից է Ջ. Ռասսելը, ում սահմանմամբ մոդուլն ուսումնական փաթեթ է, որն ընդգրկում է ուսումնական նյութի հայեցակարգային միավորները և նկարագրում է սովորողների գործողությունները: Ըստ Բ. և Մ. Գոլդշմիդների՝ մոդուլն անկախ միավոր է, որ նպատակաուղղված է ձևավորելու ուսումնական գործունեության մի շարք ձևեր՝ օգնելու սովորողին հասնելու սահմանված որոշակի նպատակների: Այդպիսի տեսակետի կողմնակից են նաև Բ. Մ. Գարանը, Ս. Ի. Կուլիկովը, Ե. Մ. Դուրկոն, ովքեր ներդրում են մոդուլ հասկացությունն ուսումնական դասընթացի ընդհանուր թեմայում:

Հետագայում մոդուլ հասկացությունը դառնում է ավելի հստակ: Յու. Ֆ. Տիմոֆեևը մոդուլ հասկացությունը դիտարկում է որպես «որոշակի համակարգի հարաբերականորեն ինքնուրույն մաս, որը կրում է գործառնության /ֆունկցիոնալ/ ծանրաբեռնվածություն»՝ ուսուցումը համապատասխանեցնելով տեղեկատվության և գործողության «չափաբաժին», որոնք բավարար են ձևավորելու ապագա մասնագետի մասնագիտական այս կամ այն գիտելիքն ու կարողությունը»²:

Հետագոտող Պ. Ա. Յուգբիչեն մոդուլը սահմանում է որպես տեղեկատվական բլոկ, որը ներառում է ուսումնական նյութի միավորի տրամաբանական իրականացումը, գործողությունների և մեթոդական ղեկավարման ամբողջ ծրագրերը, ապահովում է առաջադրված դիդակտիկական նպատակների կենսագործումը: Ի. Ա. Ջիմենյը նշում է, որ մոդուլը կարող է դառնալ ենթամոդուլ /կամ միկրոմոդուլ/՝ ըստ նրա մեթոդական ձևավորման հատկանիշի: Ուսումնական դասընթացի միջառարկայական անցումը, անգամ առանձին բաժինները և թեմաները դիտարկվում են որպես առանձին մաս՝ մասնագիտական պատրաստման որոշակի հիերարխիկ աստիճանում:

¹ Лованов А. П., Дроздова Н. В. Модульный подход в системе высшего образования: основы структурализации и метапознания, Минск, 2008, с. 17.

² St'u Принципы модульного обучения/методическая разработка для преподавателей, сост. О. Г. Проворова, Красноярский государственный университет, Красноярск, 2006, с. 13-14:

Ելնելով այս դիտարկումներից՝ մոդուլը մենք սահմանում ենք որպես ամբողջական գործառնությունների հանգույց, որում միավորված են կրթության բովանդակությունը և այն տիրապետելու տեխնոլոգիան: Մոդուլային անցման հայեցակարգային հիմքը հանդիսանում է համակարգային մեթոդաբանությունը: Այդ պատճառով նկատի է առնվում ուսումնական դասընթացների կառուցվածքը, նրա բովանդակության համակարգային բնույթը, որտեղ մոդուլն առանձնացվում է ենթահամակարգերի, իսկ ենթահամակարգն էլ ամբողջանում է կառուցվածքայնության սկզբունքով /Տես գծապատկեր 1/:

Մոդուլները համակարգված են ուսումնական դասընթացների թեմաներին համապատասխան: Ցանկացած թեմա պետք է կառուցված լինի ինքնուրույն և տրամաբանական ձևով, բովանդակությունն ունենա մատուցման առանձնացված ընթացակարգ՝ պարապմունքի դիդակտիկական խնդրին և պահանջված ուսումնական մեթոդների ընտրությանն համապատասխան: Իսկ վերահսկողությունը /հետադարձ կապը/ ենթադրում է գիտելիքի որակի և մակարդակի, գործնական կարողությունների և հմտությունների դրսևորում ուսումնական մոդուլում:

Մոդուլը հանդիսանում է մոդուլային ուսուցման միջոց, որը ներառում է գործողությունների քայլերը, տեղեկատվական բազան, մեթոդական ցուցումները, ընդհանուր անցումներն այս կամ այն գործունեության վերաբերյալ: Այս իմաստով մոդուլային ուսուցումն անուղղակիորեն ծրագրավորում է կրթության գործընթացը՝ ուսումնական տեղեկատվության, տեսական ու գործնական կառուցմանսերի իրականացման գործում սովորողների տրամաբանական աշխատանքի կազմակերպմամբ, որտեղ կրթության բովանդակությունը յուրացվում է մոդուլային կառուցվածքայնության տեխնոլոգիայով /Տես գծապատկեր 2/:

Ի տարբերություն ավանդական ուսուցման՝ մոդուլային ուսուցումն ապահովում է տեղեկատվության տրամաբանական կառուցումը, քանի որ ներկայումս կրթության բովանդակությունը շրջապատող աշխարհի մասին տեղեկատվության մասն է և միաժամանակ նրա յուրացման տեխնոլոգիան: «Այսօր կրթական համակարգը որոշվում է տեղեկատվության յուրացման և հաղորդման օրենքներով ու օրինաչափություններով, ունի գիտելիքների յուրացման իր սեփական նորարարական տեխնոլոգիան /կոգնիտիվ ուսուցում/ և գիտելիքների յուրացման մարտավարությունը /մետակոգնիտիվ ուսուցում/»³:

Կրթության տեսության մեջ և պրակտիկայում մոդուլային տեխնոլոգիան ստացել է լայն տարածում:

Այսօր մոդուլային ուսուցումը դիտարկվում է որպես ակտիվ ուսուցման ձև: Այն ուսանողին թույլ է տալիս գիտակցաբար ընդունել ուսումնական տեղեկատվությունը, ակտիվացնում է սովորողի գիտակցական գործունեության և մտածողության գործընթացը, զարգացնում է ստեղծագործական հնարավորությունները: Առաջին անգամ Տոկիոյում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային կոնֆերանսում /1972 թվականին/, հռչակվեց մոդուլային անցումը, որն ուղղված էր մեծահասակների կրթության խնդիրների լուծմանը և առավել համապատասխան է շարունակական ուսուցման համակարգին:

³ Տես *Лованов А. П., Дроздова Н. В.* Модульный подход в системе высшего образования: основы структурализации и метапознания, Минск, 2008, с. 41.

Ժամանակակից հասարակության զարգացման համար տեղեկատվությունը դառնում է ռազմավարական ռեսուրս՝ մի կողմից, մյուս կողմից՝ արագ կորցնում է իր արդիականությունը, իսկ տեղեկատվական հասարակությունն օրըստօրե վերափոխվում է, և ակնհայտ է, որ Ժամանակակից կրթությունը դառնում է շարունակական գործընթաց:

Կրթության բովանդակությունում մոդուլային կառուցվածքայնության տեխնոլոգիան նպաստում է անհատական հետազոծի ստեղծմանը և իրագործմանը:

Կրթության բովանդակությունում մոդուլային ուսուցման առավելություններն են՝


- դասընթացի հստակ կառուցվածքը, կարգավորվածությունը,
- ենթահամակարգերի միջև հնարավորությունների շերտավորումը,
- տեղեկատվության ճկուն ներկայացումը,
- հնարավորությունը՝ հարմարեցնելու սովորողների պահանջները կրթության բովանդակությանը,
- սովորողների հետաքրքրությունների և խնդիրների հաշվառումը,
- մտածողության արդյունավետ զարգացումը,
- գիտակցական գործունեության ակտիվացումը,
- կրթական գործընթացում սուբյեկտիվ դիրքորոշման ձևավորումը,
- ինքնահսկման և ինքնագիտակցման հնարավորությունը,
- հեռանկարային առաջխաղացման գործում կողմնորոշումը.

իսկ դժվարություններն են՝

- մոդուլային համակարգի արդյունավետ կիրառման գործում մեթոդոլոգիական ոչ պատշաճ պատրաստվածությունը,
- մեթոդական աշխատանքների նախապատրաստմանն ուղղված ջանքերը,
- կուտակային գնահատման բարդ հաշվարկի իրականացումը:


Այսպիսով, կրթության բովանդակությունը շրջապատող աշխարհի վերաբերյալ տեղեկատվության ծավալն է և նրա ազդեցությունն աշխարհի վրա, որը հետազոտվում, ուսումնասիրվում, ձևավորվում է ուսումնական դասընթացում և նախատեսված է յուրացման համար: Կրթության բովանդակության համակարգային ներկայացումը ենթադրում է համակարգա-կառուցվածքայնության առաջացում, և նրա բաղկացուցիչ մասերը ենթահամակարգեր են, որոնցից յուրաքանչյուրն առանձին համակարգ է: Բովանդակության յուրաքանչյուր ենթահամակարգ ձևավորվում է մոդուլում՝ նոր տեղեկատվությունը հենքային գիտելիքի հետ միավորման գործընթացների ճանապարհով: Մոդուլային կառուցվածքայնության տեխնոլոգիան հանդիսանում է կրթական գործընթացի մեկ ենթակառույցը, որը նախապես որոշված է և տրամաբանորեն շարադրվում է մեթոդական հիմնավորմամբ, որտեղ կրթության բովանդակությունը համապատասխանում է սուբյեկտի կրթության դիրքորոշմանը, նպատակին, արդյունքներին և միևնույն Ժամանակ ազդում է կրթության բովանդակության վրա՝ հիմնավորելով նրա ճիշտ կառուցման պահանջը: Բովանդակությունը պետք է կառուցել այնպես, որ հնարավոր լինի պարզելու ինքնագիտակցման և ինքնագնահատման հնարավորությունները, ընտրելու նպատակամղման հեռանկարները:

Գծապատկեր 1



Ուսումնական մոդուլի կառուցվածքը՝ համակարգայնության սկզբունքով

Գծապատկեր 2



Կրթական գործընթացի կառուցման մոդելը

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՑԱՆԿ

1. **Дроздова Н. В.** Компетентностный подход как новая парадигма студентоцентрированного образования, Минск, 2007.
2. **Лованов А. П., Дроздова Н. В.** Модульный подход в системе высшего образования: основы структурализации и метапознания, Минск, 2008.
3. **Кларин М. Б.** Технология обучения /идеал и реальность/, Рига, 1999.
4. Принципы модульного обучения/методическая разработка для преподавателей, сост. О. Г. Проворова, Красноярский государственный университет, Красноярск, 2006.

ТЕХНОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ МОДУЛЬНОГО ОБУЧЕНИЯ В СОДЕРЖАНИИ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ

А. Т. Майлян

В данной статье рассматриваются понятие "модуль" и наша точка зрения на модуль как на целостный узел функций, в котором объединены содержание образования и технологии овладения им, концептуальная основа модульного перехода, преимущества и недостатки модульного обучения в содержании образования.

TECHNOLOGICAL BASES OF THE MODULE TEACHING IN THE CONTENT OF HIGHER EDUCATION

A. T. Mayilyan

The article touches upon module concept, and from the viewpoint of module as a complete functions loop, where the content of education and its possession technology are combined, conceptual basis of transition module, in the content of education advantages and disadvantages of teaching in modules.